ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մեդստանդարտ ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	-	-	Առաջարկվող սարքավորումը պետք է լինի բարձր արագությամբ վիրաբուժական դռիլի ինտեգրված համակարգ Կրանիոտոմ, նախատեսված նեյրովիրաբուժական միջամտությունների համար: Համակարգը պետք է ապահովի բարձր ճշգրտություն, անվտանգություն և բազմաֆունկցիոնալ օգտագործում: Բոլոր բաղադրիչները պետք է լինեն միևնույն արտադրողի կամ լիարժեք համադրելի: Առաջարկվող համակարգը պետք է ապահովի՝ բարձր ճշգրտություն, անվտանգություն, բազմաֆունկցիոնալ կիրառություն: Առաջարկվող համակարգը պետք է կազմված լինի հետևյալ հիմնական բաղադրիչներից՝ Կառավարման բլոկ - Ինտեգրված վիրաբուժական էներգիայի կառավարման կոնսոլ, ինչը ապահովում է համակարգի բոլոր բաղադրիչների կենտրոնացված կառավարում, ինչպես նաև միաժամանակ մի քանի գործիքների միացման հնարավորություն:: Կառավարման բլոկի քանակը պետք է լինի մեկ հատ: Դռիլի շարժիչ Համակարգում պետք է ներառված լինի բարձր արագությամբ էլեկտրական կամ պնևմատիկ դռիլի շարժիչով, որը պետք է ապահովի ցածր վիբրացիա և նվազեցված

			տատանումներ։ Այն պետք է նախատեսված լինի նեյրոնավիգացիոն համակարգերի հետ համատեղ աշխատանքի համար և համադրելի լինի կառավարման կոնսոլի հետ։ Շարժիչի քանակը պետք է լինի առնվազն մեկ հատ։ Կառավարման ոտնակ – Համակարգը պետք է ունենա բազմաֆունկցիոնալ կառավարման ոտնակ, որը պետք է ապահովի առնվազն երեք ծրագրավորվող հնարավորություն։ Այն պետք է հնարավորություն տա կառավարել արագությունը և ֆունկցիաները առանց ձեռքերի օգտագործման։ Ոտնակի քանակը պետք է լինի առնվան մեկ հատ։ Իրիգացիոն խողովակների հավաքածու Համակարգում պետք է ներառված լինի իրիգացիոն խողովակների հավաքածու, որը նախատեսված է միանգամյա օգտագործման համար։ Այն պետք է լինի համադրելի դռիլի համակարգի հետ և ապահովի հեղուկի փոխանցում դեպի գործիք։ Խողովակների հավաքածուն պետք է կառավարվի կոնսոլով և ապահովի ներծծման ու լվացման գործընթաց ստերիլ դաշտում հոսքի կառավարման հնարավորությամբ։ Հավաքածուի քանակը պետք է լինի առնվազն մեկ հատ։ Համակարգը պետք է ներառի նաև՝ Կցորդներ (Attachments), բուրեր՝ աշխատանքային ծայրեր, Համապատասխանեցված գանգոսկրի պերֆորատորի գլխիկ։ Համակարգը պետք է ներառի կրանիոտոմիայի footed կցորդ, որը նախատեսված է գանգոսկրի կտրելու համար և ապահովում է փափուկ հյուսվածքների պաշտպանություն։ Այն պետք է համադրելի լինի բարձր արագությամբ դռիլի շարժիչի հետ և աշխատի մոտ 2.0-3,4. մմ տրամագծով բուրերի հետ։ Քանակը՝ առնվազն մեկ հատ։ Համակարգում պետք է ներառված լինի ուղիղ մեծ տրամագծով կցորդ, որի երկարությունը՝ 13-16 սմ, տրամագիծը՝ 3.0-3.5 մմ։։ Քանակը՝ առնվազն մեկ հատ։ Համակարգը պետք է ներառի պերֆորատորի համար նախատեսված հատուկ կցորդ, որը պետք է լինի համադրելի դռիլի շարժիչի հետ։ Այն պետք է ապահովի 800-1250 պտ/րոպե միջակայքում պտտման արագություն, ինչը համարվում է անվտանգ արագություն պերֆորացիայի համար։ Կցորդը նախատեսված է ոսկրում անցք բացելու նպատակով։ Քանակը՝ առնվազն

			մեկ հատ։ • Կոնաձև բուրեր։ Նախատեսված նուրբ և խորանիստ միջամտությունների համար։ Աշխատանքային մասի երկարությունը՝ 70-90 մմ միջակայքում, տրամագիծը՝ 2.1- 5.0 մմ։ Քանակը՝ առնվազն 2 հատ։ • Գնդաձև բուրեր։ Նախատեսված ընդհանուր ոսկրային աշխատանքների համար։ Աշխատանքային մասի երկարությունը՝ 140-160 մմ միջակայքում, տրամագիծը՝ 2.8-3.2 մմ։ Քանակը՝ առնվազն 2 հատ։ • Գնդաձև ադամանդապատ բուրեր։ Նախատեսված ոսկրի հարթեցման և նուրբ մշակման աշխատանքների համար։ Աշխատանքային մասի երկարությունը՝ 140-160 մմ միջակայքում, տրամագիծը՝ 2.8-3.2 մմ։ Քանակը՝ առնվազն 2 հատ։ Պերֆորատորի գլխիկ Համակարգում պետք է ներառված լինի գանգոսկրի պերֆորատորի գլխիկ, որը պետք է ունենա ավտոմատ անջատման մեխանիզմ՝ պացիենտի անվտանգության ապահովման համար։ Այն նախատեսված է գանգոսկրի մեջ առաջնային անցք բացելու համար և պետք է համադրելի լինի պերֆորատորի կցորդի հետ։ Քանակը՝ առնվազն երկու հատ։ Մատակարարը պարտավորվում է ապահովել՝ ուսուցում վիրաբույժների, վիրահատարանի բուժանձնակազմի համար, ինչպես նաև տեխնիկական ուսուցում հիվանդանոցի բիոմեդ ինժեներների համար։ Տրամադրվող սարքավորումը պետք է ունենա նվազագույնը 24 ամսվա երաշխիք։ Երաշխիքը պետք է ներառի ինչպես պահեստամասերը, այնպես էլ վերանորոգման աշխատանքները։ Երաշխիքային պայմանները չեն ներառում այն դեպքերը, երբ սարքը վնասվել է բժշկի միջամտության ժամանակ կանոնների խախտման պատճառով։ Սարքավորումը պետք է լինի նոր և չօգտագործված։ Բոլոր բաղադրիչները պետք է լինեն համադրելի և միասնական համակարգ Պարտադիր պայման է հանդիսանում՝ 1.Մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային հավաստագիր 2.Ապրանքին տրված ISO կամ CE կամ FDA որակի վկայականներ, ծագման սերտիֆիկատներ և համապատասխանության հավաստագիր։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Мед Стандард в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
1	-	-	-